


891.99

17-26



2007

1.542-3

7-36



Վ.Ր. ՊՐՈԼ.-ԳՐՈՂՆ. ԱՍՍՈՑԻԱՑԻԱ  
№ 6 ՀՍ.ՑԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ. № 6

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ն Ո Ր Ը

Բ Ի Ֆ Լ Ի Ս  
1929

27 JUN 2001

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒՔԻ


ՎՐԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏ-ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՏՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 19 NOV 2011  
№ 6 ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ № 6

891.99  
7-26

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

1005  
22323

„Ն Ո Ր Ը“



Թ Ի Յ Լ Ի Ս  
1929

2167

# ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Զուռնի ձենը սար ու ձոր եր ընկել: Զուռնաչին թշերն ուռցրած կասկարմիր կտրած՝ յերկար-բարակ ձոր եր տալիս «սահարին»:

Սարի գլխին, մոխրագույն, թեթև շղարշի պես փռված ամպերը կարմիր հագան ու առավոտվա գեփյուսի հետ խաղալով՝ շորտրալեն պար բռնեցին:

— Հիպ, հիպ, հիպ, ուռա՛... Թմբուկի թնդյունի հետ միասին վորոտաց նորակոչիկները ձայնը:

Նորակոչիկները հավաքվել էին գյուղի ծայրին գտնվող բլրի գլխին, ամբողջ գիշեր հրաժեշտի քեֆ-ուրախություն կազմակերպել, վոր առավոտյան ճանապարհվեն շրջանի կենտրոնը, իսկ այնտեղից—կարմիր բանակ, ծառայության:

Արևը, ջահել աղջկա պես, վոսկեզոծ վարսերը հորհրատին տալով, գլուխը հանեց սարի յետեից ու ջերմագին ժպտաց արար-աշխարհին, «բարի լույս» մաղթելով: Ամեն մի շունչ-արարած վոսքի յեղավ:

Կարմիր բանակ գնացողների մայրերն ու քույրերը, վոմանց ել նշանածներն ու նորահարսները, ձեռ ու վոտ ընկած՝ ճամբի պաշար էլին պատրաստում, վոր իրենց ազիզների հետ գնեն, իսկ գյուղամեջ դուրս յեկած ազամարդիկ աշխույժ խոսք ու զրույց էլին

(18782-59)

բաց արեւ զինվորական ծառայութեան մասին, իրարից խոսք խելով ու պատմելով ցարական սաղաթի կյանքից:

— Ե՛հ, ի՞նչ կա հիմիկվա ծառայութեանը... Հիմի աղայութեանն ա, աղայութեանն,—պատմում եր մեկը: —Շատ հեռու տեղը Յերևանն ա, Գյումրին, կամ Ղարաքլիսեն ու Դիլիջանը... Երեսս վոր լվանամ, մինչև սրբելը տեղ կհասնեմ: Մեր վախան ե՛ր... լըցնում եյին վազոնն ու զը՛ս հան զը՛ս, զը՛ս հան զըս, քշում Վրաստեյ...

— Ել ասում ե՛ս,—վրա բերեց մեկ ուրիշը:—Սարի ծերին ապրած չորան եյի յես, ոսի խարաւոն ել չեյի գիտում ինչ ա, տարան Տամբովսկի գուբեռնին: Դեղի համար վոր ման եյիր յեկեր, հայ չեյիր ճարիւ: Լցրին կազարմեքը, խողի պես իրար գլխի արծեցին, ու եզսի որը ռազմական ու յեկոյ-պոստոյը ջանս կապեցին. դե հիմի ապա յես, սևաճանձի մեջ ընկած ձիու պես վտոնեղ տափը թակի. վոչ յես եյի նրանց ասածը հասկանում, վոչ ել նրանք իմ լեզուն: Թե հայվանը, թե յես, մի հաշիվ եր:

— Ինձ ել տարան Լոձի,—մեջ ընկավ յերրորդը:

— Շատ տանջեցին, թե վտոնեղս գուղ ման արծեմ, ելավ վոչ. դեկիկ շինեցին. սաղ որը սապոզ եյի սրբում, կամ պոյ: Չորս տարի գուբա թակել տվի ու տուն գալիս հաշիվ արի, տեսա, վոր ոսեվար մորն ուշունց տալ եմ սովորել, մին ել երկու դուռակ, մի սաթակ. իմ ողուտն ել ես եր:

— Կնց, մի կնց,—ընդհատեց չարրորդը:—Ո՞վ դիդա, մեր ես քաջալանց Թեանի անունն ի՞նչ ա...

— Թեան ա, էլի,—ծիծաղով պատասխանեցին ամենքը:

— Բանն ել հենց եղ ա ե, վոր գիդում չեք: Ինձ ու ես Թեանին տարան Սամարղանդ: Բանից գուրս եկավ, վոր ես Թեանի անունը դավթարումը Թեադորոս ա գրած: Մի ուս գվոդնի ունեյինք, չեր կարում Թեադորոս ասի. հենց վոր գրա փամլիը կարդալու վախար գալիս եր, լեզուն կապ եր ընկնում, կզկում եր, կվզում, ու մի որ Տիվարոս կարդում, մեկել որը —Տիվարոս, Տիվարոս, Տիվրիտոս... Վերջը տեսավ շատ ա տանջվում, անունը փոխեց, դրեց Ֆեդոր: Ու ես մեր քաջալանց Թեանը դառավ իսկական ուս—Կաջալով Ֆեդոր:

— Բա ես խեղճ ու կրակ Ղանդոյանց Ակոփին, վոր սարանց մեր ուոսնից,—կրկին խոսեց առաջինը: Յես ու նա մի ուոսում եյինք: Մի կատաղած ուոսնի ունեյինք, կապիտան. մի ջանավար ուս եր. առաջ փեքսիբիլ եր ըլել. ուոսնի վախան ել արաղիցը ձեռ չեր քաշում: Մի որ գվոդնի մեղ կամանդ եր անում ծոր տարով «ոս՛գ... դե՛րոյ դվա՛...»—մենք ել ձեռներս վեր քաշած «ոսա՛ց» ասելիս կոսնում եյինք դեպի առաջ ու քանի եղ անտեր «ոսողը» յերկարեր, ենքան ել մենք կոսնալ պոեյինք, ու մին ել վոր «գվա» ասեր, պետք ա դեպի յես եյինք կոսել: Ես Ակոփի մեջը պիւդ

եր, կոանում չեր. հենց ես «գլա» ասելիս ուսնիմ յեկավ: «Սմբրնա» արին ու ել յեա սկսեցին: Ռոսնիմ տեսավ ես Ակոփի մեջքը կոանում չի, կատաղած ուշուհց ավեց ու ես խեղճին, յեա կոանալու վախաը, տուր թե կաաս չեքմի սուր քթովը—Ակոփի փորի են բոշ տեղին: Ակոփն «ոֆ» արավ ու տեղն ու տեղը վեր ընկավ usrajուր: Տարան լազարեթ: Բանից դուրս եկավ, վոր փորը պատուել ա: Դեա-դեն արին, գեղից բանից ավին, փորը ճգեցին, կարեցին, համա ել ինչ ոգուա... բանը բանից անց եր կացել: Մեռավ: Ռոսնու ինչ վեջն եր, թե Ակոփն երկու յեթիմ թողեց:

— Արն, բա կարացիք վոչ են շան աղին շանսատակ անեք,—բորբսքված հարցրեց մի ծերունի, վորը զինվորական ծառայության մեջ չեր յեղել:

— Խի, «Արջի քոխերի» ձորումն եր, վոր բանհոգի եյի արեւ, արդարացալ պատմողը,—թե կողքիս բալչեկի կար... Են վախան ո՞վ եր ավել բալչեկը, վոր բունս սարքեր...

— Համա ինչ սրբեցին, իղն ու թողը կտրեցին ե... Դե հիմի ցերեկը ճրագով ման արի, թե մի կապիսան կամ գեներալ դոնես, ափսոս, ափսոս, վոր ես բալչեկիությունը շուտ չեկավ, մեր կաշին քրքրեցին,—գլուխը թափահարեց յերբորդ խոսողը:—Իմ դեկչիկ վախաը սաղ մի շաբաթ հաց չեմ կերել: Ասելն ամոթ չըլի, ամեն առավոտ մեր ուսնու կնկա թախտի տակիցը նրա չուլ գուս եկածը դեն եյի ածում, սրամա,

սրաակտոր ըլում, ել բողազովս հաց կուլ կգնամ...

— Թն հա, թն հա,—թքտացին ամենքը:—Կարգին զրեցը գլխից կարի. արա մի կարդին զրեց չես կարում անե՞ս, ես խալխին մղածուժ արի՞ր...

— Կարգին բան եմ տեսել, վոր ասե՞մ... Կարգին բանը թնդ իմ տղեն պատմի, վոր հրեն կարմիր Բանակիցն եկել ա, տանս ճրագի պես լիս ա տալի: Անգրագեա զարկեցի, գնաց ու հալա մի տարին թամամ չեր, իր ձեռովը նամակ գրեց, վոնց-վոր շարած հուլունք: Հիմի յել աշխարհիս ամեն ծերեցը խաբար ունի, կաղեթ ա ստանում, կարդում մին-մին ել ինքն ա գրում մեր գեղի հալիցը: Են որն ել գետի մոտ կանգնել ա, գլուխը ամբամբացնում, սիս քաշում, թե ենքան Չուրը ի՞նչ յա մուստամասալա կորչում: Ասում ա—«Ես ջրի դորությունը դու չես գիտում. վոր եյիքիկի usանցի շինենք, սաղ գեղը կլիսավորվի, նոթի հոտեցն ու մրեցը կազատվենք»: Ենքան բանը վճրտեղ ա սովորել... հալբաթ, վոր կարմիր բանակում...

— Հալա մի սրա տղեցն ել խաբար առ ե... Չուլի տավարի պես դադ եր, քեթը սրբելն եր չեր զիտում. գնաց կարմիր Բանակ մարդ դառավ: Եկավ-չեկավ ՓՈԿ-ի նախագահ Չոկեցին: Են սերզատն ո՞վ բերել ավեց,—սրա տղեն, սերմազտիչն ո՞վ բերեց,—սրա տղեն, զավոյի հավն ո՞վ աղաթ գցեց,—սրա տղեն. հիմի յել կպել ա, թե անպատճառ պետք ա տրաքտոր

ըրեանք... Ինձ ու ինձ միտք եմ անում, թե սրանք սալըաթություն են անում, թե հենց սրանց զուլուղն են ա, վոր գրել-կարդալ սովորեն, վար ու ցանի նոր զայդեքն իմ անան... Սրանց ձեռին թվանք ա ըլում, թե դալամ ու գիրք, սերգատ, տրաքտոր կամ զավոդի հավ ու կով... Մենք տավարի պես գնացել ենք, տավարի պես յեկել, ել յետ կպել մեր պապական չութի ու գութանի մածիցը, սրանք մաշինով են գործ բընում...

— Ենդուր ել... խոտողին ընդհատեց մեկ ուրիշը.  
— Ենդուր ել, մեզ վոր սալըաթ եյին տանում, սաղ տունը սուգ ու շիվան եր ընկնում, համա հիմի, ում վոր Կարմիր Բանակ չեն տանում, նա յե սուգ ու շիվանը տուն գցում: Մենք հազար ու մի կաշառք, հազար ու մի ֆանդ ու ֆել եյինք հնարում, վոր աղատվենք, համա հիմիկվա ջահելին, թե լգողա ել ունեն, իրանք գնում, աղաչանք-պաղատանք են անում, վոր Կարմիր Բանակ տանեն, չուցի... զիմն ել լավ են հասկանում ու տեսնում, վոր գնացողը—գնում լիսավորվում ա, մարդ դառնում... Հրեն, նովորաճցիք քեֆ են անում, հրես կզան, ճամբա կնկնեն, համա ձգնավորանց Վասիլի տղեն մեռելատիրոջ պես տանը նըստած սևով սուգ ա նստել, վոր իրան Կարմիր Բանակ չեն տանում. ինձ ել ասել ա, վոր տանիցը փախելու յա, սղերանց հետ գնա...

\* \* \*

Մինչդեռ գյուղացիները պատմում եյին իրենց հիշողությունները և Կարմիր բանակից վերադարձածների արարքները մասին, նորակոչիկների խումբը պարելով ու յերգելով գյուղը մտալ դուռնան առաջները գցած, վորին շրջապատել եյին գյուղի յերեխաները, թռչկատալով վազվզում և «ուռա»-ներին ձայնակցում եյին իրենց մանկական գիլ ձայնով:

Վողջ գյուղը հարսանիքի արամադրության մեջ եր:

Նորակոչիկներն իրենց շքախմբով տնի-տուն աչցելում եյին «մնաս բարովի», ամեն տան դուռն սարքած սեղանից ճաշակելով ու պարելով, իսկ ընկերը ճամբի պաշարն եր վերցնում աշտան լիսուստ բերքից: Դռներից տնցնելու, բարեկամ ու ազգական նորակոչիկների գրպանները լցնում եյին մրգերով կամ նաշխուն գուլպա եյին նվիրում:

Նորակոչիկների խումբը գրեթե կազմ-պատրաստ գյուղամիջի լայն հրապարակում պար ու յերգի հերթ եր բաց արել: Քաշում եյին սրա-նրա թևից և շրջանի մեջ առած՝ ստիպում պարել: Մեծերն ել չեյին աղատվում ես «պատից»: Յերբեմն ել պարն ընդհատում եյին ու փոխում փոքրական յերգի:

— Մարոյի յերգն ածա, Մարոյի յերգը... ձայն սվեց նորակոչիկներից մեկը:

Չուռնաչին պարի յեղանակը փոխեց յերգի, ու յեղանակն աղավաղելով՝ սկսեց փչել: Խմբի աջողակ

ձայն ունեցողներէց մեկն սկսեց յերգել, վորին ձայնակցեցին և մյուսները:

Յարս կամսունոյ ե, բեխր նոր մրած,  
բեխր նոր մրած,

Կարմիր բանակ սարան, եսպես եր գրած,  
եւսպես եր գրած:

Գարնան կրգա յարս, վար ու ցան կանի,  
վար ու ցան կանի,

Լեկկոմյերիս յարս ինձ ել կսանի,  
ինձ ել կսանի:

Խորհուրեաների պաշտպան, իմ իգիք յար ջան,  
իմ իգիք յար ջան,

Դիբեդ ամուր պանի, ջանս քեզ յուրբան,  
ջանս քեզ յուրբան:

— Վա՛յ, Մարո՛, Մարո՛, քեզ տեսնողի տունը  
քանդվի, Մարո՛... մեծ աղմուկով ընդհատեց խումբը  
յերգեցողութունը, կրկին շարունակելով.

«Կոմյերիս Մարոյին չմոռնաս բարով,  
չմոռնաս բարով,

Սիրսս հետք պաշտք կսամ մեկ սարով,  
կսամ մեկ սարով»:

— Ե՛յ, գաղթական, գաղթական Դո՛, յերգդ  
սաս, յերգդ... ձայնեց մի նորակոչիկ:

— Հա՛, հա՛, Դո՛ն թող ասի, Դո՛ն... Դո՛, Դո՛,

դգդգեմ, դնեմ տակիս դգդգեմ,— գոռաց մեկ ուրիշը և  
Դո՛յի թևից բռնելով առաջ քաշեց:

— Ո՛ւտտա, զուռնիդ ձենը կարբի, զուռնիդ ձենը.  
Դո՛ն առանց զուռնի յա հաղ կանչում:

Չուռնան ընդհատեց իր նվագը: Ընդհանուր հա-  
րահրոցի մեջ Դո՛ն գլուխը կորցրել էր: Նա յիլ էր  
նորակոչիկներէ մեջ. նա յիլ էր Կարմիր Բանակ  
գնալու:

Դո՛ն համաշխարհային պատերազմի զոհերից էր,  
վոր ամեն բան կարցնելով՝ գլուխը մի կերպ ազա-  
տել էր սրից ու ընկել էր գյուղը, վորտեղ բատրակու-  
թյուն էր անում: Շատ տեղեր էր թափառել փոքրիկ  
Դո՛ն, շատ բան գիտեր աշխարհից ու մարդկանցից:  
Խորհրդայնացումից առաջ նա այդ նույն գյուղումն  
էր, բայց մի առժամանակ անհայտացավ. գնացել էր  
Նոր-Բայազետի կողմերը, ապա կրկին վերադարձել:  
Դո՛ն սովորել էր այդ գյուղի նիստ ու կացին, մարդ-  
կանցն ու սովորութիւններին: Համեստ էր, ուշկալ-  
դրա համար էլ ամենքը սիրում էին նրան ու պաշտ-  
պանում:

Դո՛ն փոխա սովով, վոր ազատվի յերգ ասելուց,  
բայց չթողին: Նա մի քիչ կարմրեց, շփոթվեց, ու  
մեկ էլ ընդհանուր աղմուկի մեջ լավեց նրա «ճղված»  
ձայնը.

«Ավիեմ քափեմ փոռիմ,  
վոսս քալեմ շոռիմ,

ձայն ունեցողներին մեկն սկսեց յերգել, վորին ձայնակցեցին և մյուսները:

Յարս կամսումոյ ե, բեխը նոր մրած,  
բեխը նոր մրած,

Կարմիր բանակ սարան, ետպես եր գրած,  
ետպես եր գրած:

Գարնան կրգա յարս, վար ու ցան կանի,  
վար ու ցան կանի,

Լեկկոյներէս յարս ինձ ել կսանի,  
ինձ ել կսանի:

Խորհուրեների պատգամս, իմ իգիք յար ջան,  
իմ իգիք յար ջան,

Իբրեզ ամուր պանի, ջանս քեզ դուրբան,  
ջանս քեզ դուրբան:

— Վսյ, Մարո՛, Մարո՛, քեզ տեսնողի տունը  
քանդվի, Մարո՛... մեծ աղմուկով ընդհատեց խումբը  
յերգեցողությունը, կրկին շարունակելով:

«Կովերիս Մարոյին չմոռնաս բարով,  
չմոռնաս բարով,

Սիրսս հետդ պաշտը կսամ մեկ սարով,  
կսամ մեկ սարով»:

— Ե՛յ, գաղթական, գաղթական Դդո, յերգը  
սաս, յե՛րգը... ձայնեց մի նորակոչիկ:

— Հո՛, հո՛, Դդոն թող ասի, Դդոն... Դդո, Դդո,

զգոգեմ, դնեմ տակիս զգոգեմ,— գոռաց մեկ ուրիշը և  
Դդոյի թեկեց բռնելով սոսաջ քաշեց:

— Ո՛ւտտա, զուռնիդ ձենը կտրի, զուռնիդ ձենը,  
Դդոն առանց զուռնի յա հաղ կանչում:

Ձուռնան ընդհատեց իր նվազը: Ընդհանուր հա-  
րահրոցի մեջ Դդոն գլուխը կորցրել եր: Նա յել եր  
նորակոչիկների մեջ. նա յել եր Կարմիր Բանակ  
գնալու:

Դդոն համաշխարհային պատերազմի գոհերից եր,  
վոր ամեն բան կարցնելով՝ գլուխը մի կերպ ազա-  
տել եր սրից ու ընկել եր գյուղը, վորտեղ բառըակու-  
թյուն եր անում: Շատ տեղեր եր թափառել փոքրիկ  
Դդոն, շատ բան գիտեր աշխարհից ու մարդկանցից:  
Խորհրդայնացումից առաջ նա այդ նույն գյուղումն  
եր, բայց մի առժամանակ անհայտացավ. գնացել եր  
Նոր-Բայազետի կողմերը, ապա կրկին վերադարձել:  
Դդոն սովորել եր այդ գյուղի նիստ ու կացին, մարդ-  
կանցն ու սովորություններին: Համեստ եր, ուշկալ,  
զրա համար ել ամենքը սիրում էին նրան ու պաշտ-  
պանում:

Դդոն վախս ավալ, վոր ազատվի յերգ ասելուց,  
բայց չթողին: Նա մի քիչ կարմրեց, շփոթվեց, ու  
մեկ ել ընդհանուր աղմուկի մեջ լավեց նրա «ճղված»  
ձայնը:

«Ավիեմ քալիեմ փոռիեմ,  
վոսես քալեմ տոռիեմ,

Բալսեմիկի գեղակը՝  
Մեհեբեմիկի դոսին):

Հորդոր յեղանակը վոզեորեց ամենքին, վորոնք  
շուրջ-պար բռնեցին, մեջ առնելով Դզոյին, վոր յերգի,  
պարելու համար:

«Վո՛ւյ-վո՛ւյ մաշիննիկը,  
Վո՛ւյ-վո՛ւյ մաշիննիկը,  
Եկավ մաշիննիկը  
Բերավ բալսեմիկը»...

«Աման Մարո, Մարո ջան,  
Մի սառ շահի փող սուր,  
Հիվանդանաս, յարո ջան,  
Վրեղ բերեմ դոխսուր»...

Յերգ ու խաղի, ծափ ու պարի եղ կրակված մի-  
ջոցին, գյուղը ծածկող բլրի յեակից հանկարծ լավեց  
մի սերիչ զուռնա-դհուլի ձայն:

Հարևան գյուղի նորակոչիկներին էյին, վորոնք  
գյուղ էյին մտնում, վոր միանան տեղացիներին ու  
միասին մեկնեն շրջանի կենտրոնը:

— Ուստա փչի, ուստա փչի, գնանք յեկողների  
առաջը:

Չուռնան զեց իր ձայնը, թմիուկը զղղաց:  
Բլրի յեակից յերևաց նոր խումբը, վորին դիմավորե-  
լու յեկան նորակոչիկները:

— Ուստա... Թնդաց յեկվորների միահամուռ ու-  
րախ ազազակը:

— Ուստա... նույնպիսի վոզեորությամբ պա-  
տասխանեցին դիմավորողները:

Միացան:

Յնծագին ազազակները զղղացնում էյին վողջ  
գյուղը: Մեծ ու փոքր դուրս էյին յեկել աներից,  
բարձրացել կտուրները—Թամաշայի:

Չուռնան փչեց հրաժեշտի յեղանակը և խումբը  
շարժեց դեպի կենտրոն, դեպի Կարմիր Բանակ...

Հորեգոնի յեղրին հազիվ նշմարվում էյին վերջին  
գնացողները, յերբ մեկ էլ մի ձայն ձկաց նրանց  
յեակից.

— Կնցեք, կնցեք, յես էլ եմ գալի, ինձ էլ  
տարեք...

Դիմացի կալերի շեկ ձանապարհի փոշու մեջ կո-  
րած, վազում էր ճգնավորանց Վասիլի սղա Սարգի-  
սը, վորը փախչում եր տանից—դեպի Կարմիր Բանակ:

## ԸՆԿԵՐ ԽՈՋԱՐԱԾԸ

— Ես մեր խորհրդային իշխանության արած նոր-նոր բաները շատ զարմանալի յեն, համա ես մինը թամամ ամենքին ավեց, անց կացավ:

Եսպես սկսեց իր պատմութունը Կարապետ բիձեն, վորը չիբուխը լցնելով՝ մի պեծի կտոր դրեց վրան ու ծուխն առատորեն դուրս թողնելով թանձր բեխերի միջից, կոկորդը մաքրելով, շարունակեց.

— Հերու յեր, գարունքվա դիմաց: Մի իրիկնամ մին ել են տեսանք մի լղար ձիու վրա նստած, հրես մի քու հասակի ջահել տղա գեղը մտավ: Դե, ըտճենց մարդիկ շատ են յեկել—գնացել կապերատիվի գործով, հողաշինարարության կամ եղպես բաների համար: Ասեցինք, սա ել դրանց պես մինը կլլի: Մենք գեղամեջ հավաքվեցինք մի նոր բան իմանալու, նա յել յեկավ ու մեր մեջը վեր յեկավ:

Սովորական բարով տալուց-առնելուց հետո, ուղեցինք նորեկի միաքն իմանանք:

— Յես, ասաց նորեկը, յեկել եմ ես գյուղում խոզ պահեմ:

— Խնդ... զարմացած հարցրին ես ու են կողմից:

— Այո, խոզ, ցեղական խոզ:

Այ, խոզն ել կտրվի, իրան ցեղն ել, մեր գե-

ղում խոզարած քիչ կամ, վոր վեր են կալել քեզ պես պատվական մարդուն զարկել, վրա բերի յես ու մի կողմ քաշվեցի, թե մի լավ միաք անեմ ես բանի վրա: Գեղացիք ել իրար աչքով-ունքով անելով՝ ծիծաղները գոռով հուզ տված գես-դեն քաշվեցին:

Դե, յեկողն ինչքան ել լավ հագնված ըլեր, անք թե շատ ել խելք, մի բան վոր խոզարած եր, նրան ել թվ բանի տեղ կդներ...

Դե, դու գիտես, յես աշխարհ տեսած մարդ եմ, գլուխս հազար տեղ գիտած, ինչ դուլուդի ու փեշակի մարդ ասես, տեսել եմ, բայց, վոր մարդ խոզ պահելու ուսում առնի, ետ իսկի իմացած չեյի: Ինքս ինձ միտք արի, միաք ու վճռեցի, վոր հալբաթ եզ խեղճ մարդը ուսում ա առել ու ուսումիցը խելքը բան չի կարել, քաղաքումս ել գործ չեն տվել, գլխերկցը ռադ անելու համար զարկել են մեր գեղը, վոր իրան շատ խոզով հայտնի գեղ ա: Ելի մտաեցա, թե մի ես նոր տեսակի խոզարածի խելքը ծանր ու թեթե անեմ:

— Ընկեր, ծիծաղս դոռով պահելով հարցրի յես. դու ուսում-բան ունես, թե հենց խոզարած ես, վոր կաս:

— Այո, հայրիկ, յես խոզ պահելու մասնագետ եմ. հատկապես ուսումնասիրել եմ խոզարուծությունը, չորս տարի Յեվրոպայում դրանով եմ զբաղվել:

— Յեվրոպիա...

— Այո, Յեվրոպա:

— Տնանշեն, ել խի՛ր հողքան հեռու տեղ ես գնացել, կնա կգայիր մեր գեղն, ելի, քեզ հենց խողարած կշինեցինք, վոր խակի պուսա Ովագիմն ել չեր կարող հեող խոսա:

Նա հասկացավ, վոր յես ծաղրում եմ իրան, բայց չհեղացավ. կամաց քմծիծաղ ավեց ու դառնալով գործկոմի նախագահին, ասաց.

— Ընկեր, խնդրում եմ վաղը յերկու մարդ գըտնեք, վոր ինձ հետ միասին կայարան գան, խողերն արդեն յեկած կլինեն, պետք է գյուղ հասցնենք:

Մուկը վրա յեր հասնում: Նորեկն ու գործկոմի նախագահը գնացին տուն, խակ գեղացիք իրար ուսի տալով՝ լեզուները բացված, սկսեցին մի ծափ ու ծիծաղ ես նոր խողարածի մասին:

Ել ի՞նչ ասես, չասեցին, ել ի՞նչ մասխարա բան ասես, չհնարեցին: Վերջն ել ես մեր ձայնազուրկ տերտերը, վոր եղտեսակ ժամանակները լեզուն գազ ու կես ա հանում, դարձավ, թե՛

— Ըհը՛, եզ ել ձեր հավանած խորհրդային իշխանությունը, ձեզ ուզում ա խողով լուսավորի...

Իրուսան ասած, ուղեցի ես տերտերին մի լավ կարկատեմ, համա յես ել լավ չեյի հասկանում, թե ինչու՞մն ա բանը, վոր շշպրեմ, ու վախեցա յես ել ծափ ու ծիծաղի արժանանամ:

Առավոտն ես մեր խողարած ընկերն ել յես երեկվա լրար ձին նստած, մեր գեղացի երկու ջահել ել

նրա հետ վտտով՝ ճամբա ընկան դեպի վագգալ: Սող գեղը մերով մանուկով դուրս եր յեկել, թե ետ «կառավարական խողարածին» տեսնի: Ամենքն ել զիտեցին նրա մասին: Բայց ես ընկեր խողարածն իսկի աջնու՞մն ել չեր դցում, թեև լավ գիտեր, վոր ամենքն ել իրեն համար են կալ ու կուուր բռնել:

Նրանք վոր աչքներիցս ընկան, մենք կարմջ արինք գործկոմի նախագահին, վորի տանը գիշերն անց եր կացրել խողարածը:

— Ա՛րա, Ակոր, եզ խողարածը վերտեղացի յա, հարց ավեց գեղի ամենաշատ խող պահող Մարդանանց Միզին:

— Գիտեմ վոչ՝ համա շատ ուսումնական մարդ ա, պատասխանեց Ակորը:

— Յանի գրել-կարդալ գիտի, թե ոսերենը փալատով ա բռնում, հարցրեց մեկ ուրիշը:

— Ի՛նչ ոսերեն, նեմեցի լիզուն ջրի պես ա լիմում, քեզ ուսումնական եմ ասում ե՛, ուսումնական. մեր գեղը հլա եղքան գիտնական: մարդ չի մտել:

— Ասա խողերին լեմսի լիզու ա սովրացնելու, ելի, ծիծաղելով մեջ մտավ ձայնազուրկ Զաքարը:

— Խողերին գիտեմ վոչ, համա վոր ձայնազուրկներին ֆարսի ա հաջացնելու, եզ մի լանը հաստատ գիղամ, մի լավ գաղեց Ակորն ու դարձավ Ստեփան բեգի թոռանը, Սահակին.

— Տանդ են վերեի ոթախը կղարդակես, ընկեր

1005  
29323

Արմենակի համար («խոյարածի» անունն է), վոր միջին ինքն ապրի, տակի պարզվալն ել կմաքրես, վոր խոզերը մեջը տեղավորի:

— Իմ պարզվալի տակը լորի (լորենի) տախտակով շինած մի լիսավոր կարգին ոթախ ա, ամառը յես միջին ապրում եմ, վերի ոթախը քրեհով դաչնիկի տալի. իմ պարզվալը հու գոմ չի, յա խոզալան, վոր նրան տամ: Ո՞վ ա իմացել, խոզը պուլած ոթախում պահելը, հակասակվեց Սահակը:

— Չես իմացել, կիմանաս ու կտենաս, նրա խոզերը գոմում չեն կարալ ապրեն:

— Խի, քաղքի բարիշնա յեն, սիպտակ շորները կկ'դոտոթ... նորից մեջ մտավ ձայնապարկ Զաքարը:

— Բարիշնա չեն, համա քեզանից թամուզ նիստ ու կաց ունեն, մին ել կարկատեց Ակորն ու ինձ, բջիջի քարաուղարին ու անասնաբուժակին կանչեց գործկոմի գրասենյակը:

Նստեղ Ակորը մեղ բացատրեց, հասկացրեց, թե կառավարությունն ուղում է մեր խաղերի ցեղն ազնւվացնի, վորից մենք շատ ոգուտ կուենենանք: Հայտնեց նմանապես, վոր եղ խոզարած ասածը համալսարան ավարտած գիտնական մարդ ա, վորին կառավարությունն տնազին ոտճիկ ա նշանակել, վոր մեր գեղումն ապրի, ու թե մենք շատ պետք ա ուրախ լինենք եղ բանի համար ու ամեն կերպ աջակցենք նրան:

Մենք վոր գործկոմի գրասենյակից գուրս յեկանք, թե գնանք Սահակի պարզվալը մաքրենք խոզերի համար: Գեղամիջում մեծ ու պուճուր իրար խառնված, խոզարած Արմենակի անունն Ախալցխի ծամոնի պես ծամում-ծամծում է յին, իրար բերնից խլելով:

\* \* \*

— Եզսի որը խոզերը բերին: Խողեր... մի ջուխա թումբ ասա: Խող եմ ասում ե... մերը չմտնի, ամեն մինը քսան փութ թե չգար, մի բան ել պակաս չեր ըլի: Ասա քոքութենից կարում ին ման գան... Ենքան ել թամուզ, սիպտակ, վոր կասես սավանի միջեց նոր են հանել:

Թամաշեն դու հիմի կատեղ տես Եղ քու տեսած շատ խող պահող գեղացիք լցվել են գեղամեջ, ճամբեքը կարել, թողում չեն, թե եղ խեղճ բեզարած հայվաննին տեղ հասնեն: Հենց են վրա թափվել, վոր կասես իրանց որումը խողի յերես տեսած չըլեն:

Ես մեր ընկեր խոզարածն ել ես խոզերին վոնց ա ձեռ քսում, քրտինքը սրբում, վոնց ա ջան ասում, կասես ոխառը տարով իր վորդկերանց յերեսը չտեսած մեր ըլի:

Աղաչանք-պաղատանքով ես մեր ընկեր Արմենակը համողեց, վոր խալիը ցրվի ու թողնի, վոր խոզերը տուն հասնեն, հանգստանան: Խոստացավ, վոր հերթով ամենքին ել շանց կտա, կհասկացնի, թե վոնց

պետք ա անեն, վոր իրանք ել եդ տեսակ խող ունենան: Ասեց, վոր ինքը հենց դրա համար ել յեկել ա, վոր ամեն բան սովորացնի...

Սողերը տեղ հասան թե չե՞ ես քու տեսած լավ ու թամուզ շորեր հագած ընկեր Արմենակը շորերը հանեց, մի ֆարթուկ հագավ ու ես խողերին վոնց ա լողացնում...

Մի խոսքով ես մեր գեղը վոնց վոր քյանդրբազին (լարախաղաց) թամաշա անող, սաղ որը մինչև պինդ մութը, բան ու գործը թողած՝ թամաշա յեր անում, թե ես մեր նոր դայդի խողարածը վոնց ա երեխատեր մոր պես են հայվարա խողերին՝ դուր-դուր անում (խնամք տանում):

Գեղացոց ծափ ու ծիծաղը, մասխարա պցելը կարել եր: Հիմի ել ուրիշ դայդի եյին խոսում, կասես մի որ առաջ, ելի եդ նույն տեղը հաղար ու մի բամբասանքի տոպրակը բաց արածները չըլեյին, վոր յա խողարածին եյին փնտովում, յա կառավարությանը:

Իսկ Մարդանանց Միդին մատենալով կամաց փսփոսաց ախանջիս:

— Կարապետ, եդ խողարածի հետ ծանոթ ես, մի կամաց գլխի գցի, տես, թե կծախի, թո՞ղ ինձ տա, առնեմ, ուզում ա տեղը հիտուն ջոկովի խող տամ: Իսկի ձեռից բաց թողնելու բաներ չեն, աչքս վրաները մնաց...

Սաղ որերով ես քու տեսած գեղացիք հա՞ վա-

զում եյին խողերին թամաշա անելու: Հիմի ել հաղար ու մի պատմություն հնարեցին եդ խողերի մասին, թե դրանք իսկական խող չեն ու խողի ել խասյաթ չունեն, վոչ ցեխն են մտնում, վոչ վրաները վոջիլ կա, վոչ ել սրա-նրա բաղ ու բաղչեն են քանդում:

Ես մեր ընկեր Արմենակն ել հա՞ խոսում եր ու խոսում խողերի մասին, նրանց պահելու մասին ու ամեն բանով հաստատում, վոր խողերն ամենամաքրասեր կենդանիներն են, ու եսպես հաղար ու մի բաներ: Մի խոսքով՝ գեղը թամամ վոր լուսավորում եր:

Մի քանի ամիս անց՝ մերունը ծնեց: Դու մի պետք ա կնտեղ եյիր ըլել ու տեսել, թե ես մեր Արմենակը վոնց ա տատմոր պես ամեն մի գոճուն լողացնում, փաթաթում, տակները մաքրում... Ո՞յին եր, ո՞յին... Համա վոչ մի գեղացի չեր համարձակվում վրեն ծիծաղի: Գալիս եյին, թամաշա անում ու գըլուխները պտուտ տալով՝ հեռանում ու իրար պատմում եդ զարմանալի խողարածի մասին:

Նոր ծնած գոճիների մուշտարին շատացավ. ամեն մի տնվոր ուզում եր ինքն ել ունենալ, բայց Արմենակը վոչ վոքի չեր տալիս: Յես ել խնդրեցի, թե մի հատն ինձ տա, ինչ գին ել ասել եր՝ կտայի, համա ինձ ել մերժեց, ասելով, թե մինչև կառավարությունից հրաման չըլի, վոչ մի գոճի իրավունք չունի վոչ վոքի տալու:

Տարին բոլորեց: Ընկեր Արմենակի խողերը շա-

պետք ա անհն, վոր իրանք ել եդ տեսակ խող ունե-  
նան: Ասեց, վոր ինքը հենց դրա համար ել յեկել ա,  
վոր ամեն բան սովորացնի...

Սողերը տեղ հասան թե չի՝ ես քու տեսած լավ  
ու թամուզ շորեր հագած ընկեր Արմենակը շորերը  
հանեց, մի Փարթուկ հագավ ու ես խողերին վոնց ա  
լողացնում...

Մի խոսքով ես մեր գեղը վոնց վոր քյանդրբա-  
զին (լարախաղաց) թամաշա անող, սաղ որը մինչև  
պինդ մուլը, բան ու գործը թողած՝ թամաշա յեր ա-  
նում, թե ես մեր նոր դայդի խողարածը վոնց ա երե-  
խատեր մոր պես են հայլարա խողերին՝ դոլ-դոլ ա-  
նում (խնամք տանում):

Գեղացոց ծափ ու ծիծաղը, մասխարա գցելը  
կտրել եր: Հիմի ել ուրիշ դայդի էյին խոսում, կա-  
սես մի որ առաջ, ելի եդ նույն տեղը հաղար ու մի  
բամբասանքի տոպրակը բաց արածները չըլէյին, վոր  
յա խողարածին էյին փնովում, յա կառավարութեանը:

Իսկ Մարդանանց Միգին մտտենալով կամաց  
փսփոսաց ականջիս.

— Կարագետ, եդ խողարածի հետ ծանոթ ես,  
մի կամաց գլխի գցի, տես, թե կծախի, թո՛ղ ինձ տա,  
առնեմ, ուզում ա տեղը հիսուն ջոկովի խող տամ: Իս-  
կի ձեռից բաց թողնելու բաներ չեն, աչքս վրաները  
մնաց...

Սաղ որերով ես քու տեսած գեղացիք հն վա-

զում էյին խողերին թամաշա անելու: Հիմի ել հաղար  
ու մի պատմութուն հնարեցին եդ խողերի մասին,  
թե դրանք իսկական խող չեն ու խողի ել խասյաթ  
չունեն, վոչ ցեխն են մտնում, վոչ վրաները վոջիլ կա,  
վոչ ել սրա-նրա բաղ ու բաղչեն են քանդում:

Ես մեր ընկեր Արմենակն ել հն խոսում եր ու  
խոսում խողերի մասին, նրանց պահելու մասին ու  
ամեն բանով հաստատում, վոր խողերն ամենամաք-  
րասեր կենդանիներն են, ու եսպես հաղար ու մի բա-  
նեք: Մի խոսքով՝ գեղը թամամ վոր լուսավորում եր:

Մի քանի ամիս անց՝ մերունը ծնեց: Դու մի  
պետք ա կնտեղ էյիր ըլել ու տեսել, թե ես մեր  
Արմենակը վոնց ա տատմոր պես ամեն մի գոճուն  
լողացնում, փաթաթում, տակները մաքրում... Ո՛յին  
եր, ո՛յին... Համա վոչ մի գեղացի չեր համարձակվում  
վրեն ծիծաղի: Գալիս էյին, թամաշա անում ու գը-  
լուխները պտուտ տալով՝ հեռանում ու իրար պատ-  
մում եդ զարմանալի խողարածի մասին:

Նոր ծնած գոճիները մուշտարին շատացավ. ա-  
մեն մի տնվոր ուզում եր ինքն ել ունենալ, բայց  
Արմենակը վոչ վոքի չեր տալիս: Յես ել խնդրեցի,  
թե մի հատն ինձ տա, ինչ գին ել ասել եր՝ կտայի,  
համա ինձ ել մերժեց, ասելով, թե մինչև կառավա-  
րութունից հրաման չըլի, վոչ մի գոճի իրավունք  
չունի վոչ վոքի տալու:

Տարին բոլորեց: Ընկեր Արմենակի խողերը շա-

տացել են ու հիմի գեղականը խնդիր ա տվել կառավարութեանը, վոր իրավունք տա եղ խողերիցը սերմի համար առնելու, չենք իմանում, թե ինչ պատասխան կգա:

Մի բան ամենից զարմանալին ա, վոր հիմի մի քանի հոգի, հույս ունենալով, թե եղ նոր ցեղի խողերիցը կստանան, հրեն խողերի համար ոթախ են շինում, լուսավոր, տակը պոլած:

Քեզ եմ հարցնում, բա զարմանալու բան չի... իրանց տները վոր տեսաս, ելի, սրանից հարյուր տարի առաջ վոնց վոր ելել ա, հողածածկ ու մութը, նամ (խոնավ), թողոտ, ելի են ա ֆտացել, իսկ խողերի համար պալատի պես տներ են շինում, թե ինչ ա, ընկեր Արմենակը, վոր խողերի պահելու տեղը չհավանի, իրանց եղ խողերիցը չի տալ...

1927

## ԱՆՈՅԻ ԶՈՒՌՆԵՆ

— Հիմի արի քեզ պատմեմ մեր Ալոյի գուռնի մասին,— շարունակեց իր գրույցը Կարապետ քիձեն, վորը գյուղի անցուղարձից պատմութեաններ եր առնում ծանր ու բարակ, տեղ-տեղ համեմելով իրեն հատուկ սրախտութեաններով:

— Բանն ետզես պատահեց: Մի յերկու ամիս սրանից առաջ, մի կիրակի որ, մին ել տեսանք, հրես մեր շրջագործկոմի նախագահ ընկ: Սեղրակն ու մի անծանոթ ջահել տղա, ձիավորված գեղը մտան: Հավաքվեցինք մեր գործկոմի շենքի առաջ, վոր, իմանանք նրանց դալու պատճառը:

Ես մեր ընկեր Սեղրակի ձեռին, բերանը լին, գրամաֆոնի տրուբի նման մի գուռնի պես բան կար, իսկ անծանոթի ձեռին ել մի պուճուր յաշիկ:

Ընկեր Սեղրակի ուսնգիցը յերևում եր, վոր շատ ուրախ ա. դրա համար ել հենց վոր մտտեցա բարով տամ, ծիծաղելով ասացի.

— Ընկեր Սեղրակ, չըլի՞ գործկոմութեանից զահլեդ գնացել ա, հիմա ել թազա փեշակի յես դուրուդ անում, ես ձեռիդ գուռնեն ի՞նչ բան ա...

Գեղացիք ծիծաղեցին, Սեղրակն էլ նրանց հետ չն, են էլ ասեմ, վոր ես մեր ընկեր Սեղրակը շատ հանաք վեր ունտղ տղա յա, իրենից առաջ ելած շըրջ-գործկոմի նախագահ Բաղամի նման մուգած չի, վորի ունքամիջիցը սև ձեթ էր կաթում: Պահ, պահ, հետը մի հանաքավարի զրից չէր ըլի անիլ: Համա սրա բունը ուրիշ ա. ծիծաղը պուռներին, հանաքը լեզվի ծերին, խաթրով ամեն բան էլ անում ա. մենք էլ շատ ենք սիրում, ինչ վոր ասում ա, խոսքիցը դուս չենք գալի:

Հն. գանք գուռնին:

Ես մեր ընկեր Սեղրակը թե՛

— Ես գուռնեն ձեր տեսածներիցը չի. սա վոր կա, աշխարհիս ամեն մի ծերից ձեզ նոր-նոր բաներ պետք է պատմի: Հրեն ընկեր Արմենը (անձանոթի անունն է) կարքի ու գուք ամեն ոք կլսեք—հենց ես գուռնի միջով—թե ինչ է կատարվում Թիֆլիսում, Մոսկովում ու ելի ուրիշ քաղաքներում. ասաց ու քմծիծաղ տալով՝ անձանոթին աչքով արավ:

Հարաթ մեզ ձեռ ա առնում, մտածեցի յես. թե չե գրամաֆոնի տրուբեն ինչ ա, վոր աշխարհիս ամեն տեղից խաբար տա: Գեղացիք էլ կասկածով իրար յերեսի մտիկ արին ու ավելի մոտեցան, թե մի լավ տնդղեն եդ արմացք գուռնեն: Դե, ռեխը լին գրամամաֆոնի տրուբի ինչը տնդղես... ծակ տրուբա յա, ելի...

— Ընկեր Սեղրակ, սա ենա գեղի հարսանիքնին կառավարութեան հաշիվն ենք անելու, ելի, ծիծաղելով մեջ մտավ մեր գործկոմի նախագահ Ակոբը. բա վոր հրես ես դավալ Ուսեփը գանգատ գնա, թե իրեն հացը կարում եք... Հտհենց գուռնա-պրամաֆոն շատ ենք տեսել: Են վոր վախտն էր հա, մեծ կովիցն էլ առաջ էր, վոր մեր գյոռբագյոռ քյոխվա Վասիլի տղա Սանդրոն քաղքիցը բերեց ու ամեն գիշեր մի գլուխ «մեր հայրենիք» էր զուղացնում իրանց բալկոնիցը ու ես խալիխն քնահարամ անում ամառվա խոտի ու հնձի են փիս վախար...

— Ել խթ հեռու յես գնում, Ակոբ, հերու միտղ չի, ինչ մի պետրուշկա պար ամող գրամաֆոնը շահած գեղից-գեղ ընկած ման էր գալի, կնանոցն ու երեխեքին խաբում, թե գրամաֆոնի միջին սատանա կա նստած... Ակոբի խոսքին ուժ տվեց կոոպերատիվ վարիչ Արտաշը, մի կողմից էլ ուզելով հասկացնի, վոր մեզ ենքան էլ միամիտ ու աշխարհից բեխաբար մարդկանց տեղ չգնեն:

— Ես գուռնի հուռարը հրեն ես նոր եկած ընկերի ձեռի յաշիկումն ա, վրա բերեց փոխոգկոմի նախագահ Վաղոն, վոր քաղաքներում ապրած մարդ ա. հրես վոր ասեղն ու պլաստիկեն իրար գցել, ուզում ես՝ թուրքի բայթի կկանչի, ուզում ես՝ ռսի կարակ («գուպակ» պարը), ուզում ես՝ վրացու հառար, յա հայի Հոռոմ...

Գրամաֆոնի մասին պատմութիւն անող շատ կարգեւ, ամենքն ել համարյա տեսել են. հիմի յեւ հրեն մի հատ կա մեր գեղումը. քաղաքումը յերկար ժամանակ պովարութիւն (խոհարարութիւն) արած Վառլամի տանը, վոր քեֆի լավ վախալը մին-մին քոքում ա ու խոխոցը գցում: Գրամաֆոնն ել ա տիրոջ պես մաշվել, խոխոցն ընկել...

— Մոտ յեկեք, ասաց անծանոթ ընկերը, ու մի լավ նայեցեք, վոր ես արկղի մեջ վոչ ասեղ կա, վոչ ել պլաստիկա. սա թեև գրամաֆոն չի, բայց և այնպես կտեսնեք, վոր վաղը յերեկոյան կսկսի կենդանի մարդու պես խոսել, զանազան լուրեր հաղորդել և վերջն ել ինչ վոր մեծ քաղաքներում նվագեն կամ յերգեն՝ դուք ետեղ կլսեք...

Ես ասելով՝ անծանոթ ընկեր Արմենը բաց արավ յաշիկի խուփը, ու դրուստ վոր միջին բացի յերեք թե չորս ելեքտրիչիկ լամպից, լավ չի միտս, ել ուրիշ համարյա բան չկար:

Ես բանը մի քիչ մեզ կտորեց:

Գեղացիներէց մինը թի՛

— Հնգեր, ես գաղի անուամ ի՞նչ ա...

— Ինչո՞ւ, պատասխանեց ընկեր Արմենը:

— Ռադիո՞... կրկնեցինք ամենքս, վոր միտներս մնա:

Ընկեր Սեդրակն ու Արմենը մեր գործկոմի նա-

խագահ Ակոբի հետ մտան խրճիթ-ընթերցարանը, այսինքն՝ մեր առաջվա յեկեղեցին, իսկ մենք դուրսը զոքուացնում եյինք, չհասկանալով բանի դորութիւնը, վոր իրար մի բան հասկացնենք, մինչև մութն ընկավ ու ցրվեցինք մեր տները:

\* \* \*

— Ստալտան ով բանի գնաց, ով չե՛ յես չիբուխս քոքելով տանից դուրս յեկա թե գնամ գեղամեջ: Մին ել հեովից են տեսա, վոր ես մեր ընկեր Սեդրակը, Արմենը, մին ել մեր գեղի դարբին Ստեփանը խրճիթ-ընթերցարանի կտերը, կրամիտի վրա սոթ-սոթ անելով դես-դեն են գնում, ձեռներին մի յերկար երկաթի սարի (ձող) բռնած:

Մոտեցա ու հեովից թամաշա յեմ անում:

Յեկեղեցու գմբեթի գլխիցը խաչը վաղուց հանել եյինք ու մի տեսակ կասես զլուխը կարած ըլեր, անշնորհք: Ես խաչի տեղը բերին ու իրանց ձեռի երկաթի սարին անկեցին, վորի ծերիցը, ամեն կողմից մի թել եր կապած ու կախ ընկած: Ընկեր Արմենը ես թելիը քաշեց, պնդացրեց խրճիթ-ընթերցարանի կտրի փետերից մեկին, հետս ամենքն ել ցած իջան, ես թելիից բռնած մտան ներս: Յես ել մտա: Արմենը ծիծաղելով դարձավ դեպի ինձ:

— Հը՛, բիձա, յեկել ես, թե տեսնես վոնց ենք գուռնեն սարքում...

Գրամաֆոնի մասին պատմութիւն անող շատ կարգէն, ամենքն ել համարյա տեսել են. հիմի յեւ հրեն մի հատ կա մեր գեղումը. քաղաքումը յերկար ժամանակ պովարություն (խոհարարություն) արած Վառլամի տանը, վոր քեֆի լավ վախալը մին-մին քոքում ա ու խոխոտցը զցում: Գրամաֆոնն ել ա տիրոջ պես մաշվել, խոխոտցն ընկել...

— Մոտ յեկեք, ասաց անծանոթ ընկերը, ու մի լավ նայեցեք, վոր ես արկղի մեջ վոչ ասեղ կա, վոչ ել պլաստիկա. սա թեև գրամաֆոն չի, բայց և այնպէս կտեսնեք, վոր վաղը յերեկոյան կսկսի կենդանի մարդու պես խոսել, զանազան լուրեր հաղորդել և վերջն ել ինչ վոր մեծ քաղաքներում նվագեն կամ յերգեն՝ դուք ետեղ կլսեք...

Ես ասելով՝ անծանոթ ընկեր Արմենը բաց արավ յաշիկի խուփը, ու դրուստ վոր միջկն բացի յերեք թե չորս ելեքտրիչկի լամպից, լավ չի միտս, ել ուրիշ համարյա բան չկար:

Ես բանը մի քիչ մեղ կոտրեց:

Գեղացիներից մինը թե՛

— Հնգեր, ես գաղի անուռն լինչ ա...

— Դնդիո, պատասխանեց ընկեր Արմենը:

— Ռադիո... կրկնեցինք ամենքս, վոր միտներս մեա:

Ընկեր Սեդրակն ու Արմենը մեր գործկոմի նա-

խագան Ակորի հետ մտան խրճիթ-ընթերցարանը, այսինքն՝ մեր առաջվա յեկեղեցին, իսկ մենք դուրսը դռնացնում եյինք, չհասկանալով բանի դրուեթյունը, վոր իրար մի բան հասկացնենք, մինչև մուծն ընկավ ու ցրվեցինք մեր տները:

\* \* \*

— Առավոտն ուլ բանի գնաց, ուլ չե՛ յես չիբուխ քոքելով տանից դուրս յեկա թե գնամ գեղամեջ: Մին ել հեռվից են տեսա, վոր ես մեր ընկեր Սեդրակը, Արմենը, մին ել մեր գեղի դարբին Ստեփանը խրճիթ-ընթերցարանի կտերը, կրամիտի վրա սոթ-սոթ անելով դես-դեն են գնում, ձեռներին մի յերկար երկաթի սարի (ձող) բռնած:

Մոտեցա ու հեռվից թամաշա յեմ անում:

Յեկեղեցու զմբեթի գլխիցը խաչը վաղուց հանել եյինք ու մի տեսակ կասես գլուխը կտրած ըլեր, անշնորհք: Ես խաչի տեղը բերին ու իրանց ձեռի երկաթի սարին անկեցին, վորի ծերիցը, ամեն կողմից մի թել եր կապած ու կախ ընկած: Ընկեր Արմենը ես թելը քաշեց, պնդացրեց խրճիթ-ընթերցարանի կարի փետերից մեկին, հետս ամենքն ել ցած իջան, ես թելիբից բռնած մտան ներս: Յես ել ստա: Արմենը ծիծաղելով դարձավ դեպի ինձ:

— Հը՛, բիձա, յեկել ես, թե տեսես վոնց ենք գլուռնեն սարքում...

— Ալոն վաղուց ա մեռել, ուզում ես աղին կանչեմ...

Մի ծիծաղ ընկավ մեր մեջ, մի ծիծաղ, վոր քիչ եր մնում փորներս պատօրի:

Ես ծիծաղել թուեղ վախտն եր, վոր մին ել են խմացանք զուռնեն նորից բղավեց, պարզ, վոնց վոր յես հեռոզ զրից եմ անում, «լսեցեք, ոտդիտ լսողներ, խոսում ե թիֆլիսը: Լսեցեք հայերեն լեզվով կզեկուցեն մալաբխայի հասցրած ֆրասների մասին»:

Ու զուռնեն զորթ վոր սկսեց մարդու պես խոսալ: Յես... մեղքս ինչ ծածկեմ, հենց գիտեյի, թե անպատճառ Սեղրակի կամ Արմենի սարքած մի սատանութին կլի, համա լավ տեսա, վոր նրանք ել են մեր մեջ կանգնած լսում:

Հայերեն խոսողը պրծավ թե չե՝ զուռնեն մին ել բղավեց— «Ալո, ալո» ու հիմի յել ոսերեն սկսեց խոսալ, վոր վերջացնելուց հետո մեղ թարգմանեց ընկեր Սեղրակի: Բանից զուս յեկավ, վոր մի մարդ ել խոսում եր «ՄՈՊՐ»-ի մասին:

Են վոր ասում են մարդիկ արձան են դառնում, եղ թամամ հավաքված մեր գեղի խալխն եր: Շունչներն իրենց քաշած, բերանները բաց, արմացքն երեաները պատած, իսկի աչք ել չեյին ճպում:

Ել ինչ զլուխդ ցավացնեմ, Արմենը ներս մտավ, թե ինչ արեց, ինչ չարեց, չիմացա, դուրս յեկավ, թե հիմի հրես Մոսկովից կխոսան:

Զուռնեն ել յես Ալոյին կանչեց ու սկսեց ոսերեն հեռագիր կարդալ: Ես ել վոր պրծավ, ել յես Ալոյին կանչեց ու հիմի ել սկսեց մուզիկա անել: Վերջում ել ամենքիս բարի գիշեր մաղթեց ու սուս կացավ:

Գեղացոյ զարմանքն ել վոչ խոսքով պատմելու յա, վոր պատմեմ, վոչ ել զալամով գրելու, գրեմ: Ընտեղ պտեյիր, վոր քու աչքովը տեսել իր...

Հիմի դու պեռք ա են տեսաս, թե ամեն իրեկուն սող գեղը, մերով-մանուկով վոնց ա գեղամեջ հավաքվում Ալոյի զուռնին սկանջ անելու, վոնց վոր մի մեծ հարսանիքի թամաշաչի:

Բայց ինչքան ել ընկեր Արմենը բացատրեց ուրինակներ բերեց, մինչև սրս ել չենք կարում հասկանանք թե եղ ոտդիտ ասածը վոնց ա ողի միջից են թեկերով թիֆլիսում, Մոսկովում կամ ուրիշ քաղաքներում ասված բաները բռնում ու գցում զուռնի մեջը:

Զուռնի անումը զրել ենք Ալոյի զուռնա: Գեղամիջով ամեն անց կենող կանգ ա առնում, զուռնին մտիկ տալի, զլուխը պատում եղ արմացք բանի վրա,

քմծիծաղ տալի ու նրա նման բղավում «բարի լուս Ալո» կամ «բարի սր Ալո» ու ճամբեն շարունակում:

Հիմի վոր գեղը մտնես, հրեն համարյա ամեն տան կարի վրա մի լորու սարի կա սնկած, թեղերը կախ արած, մինի ծերը հողումը թաղած, մինն ել մի յաշիկի մեջ կոխած: Դա—յերեխանց սարքած ոյինն ա, մութն ընկնում ե թե չե, «Ալո» յեն հաղ անում, մինչև իսկական Ալոյի գուննի կանչիլը...

1927

Մ. Դարբինյանը ծնվել է Շամշադնի շրջանի Տա-  
ուշ (Թավուզ) գյուղի մի չքավոր ընտանիքում: Ա-  
վարտել է Ներսիսյան դպրոցը, ապա յերկու տարի  
յիցել է ուսանող Անդրկ. համալսարանի պատմա-լիզ-  
վաբանական ֆակուլտետում:

Դեռ ես աշակերտ (1907—08 թ. թ.) սկսել է գրե-  
մանկական պատմվածքներ և յերգիծաբանական մի-  
նիատյուրներ: Առաջին գեղարվեստական գրվածքը  
(պատմվածք) լույս է տեսել մանկական «Ն. սկեր»  
ամսագրում 1908 թվին: Ունի մի շարք պատմվածք-  
ներ և մանկական հեքյաթներ, առակներ ու բանաս-  
տեղծութուններ, վոթոնք լույս են տեսել մեր պար-  
բերականներում և ժուրնալներում:

Առանձին գրքերով հրատարակել է.—«Մինիստրը-  
ներ»—կոմեդիա, «Վլաստը» (պատմվածքներ), «Ցարն  
ու մորճը» (մանկ. հեք), «Շահ-Չաղեյի տբասին»  
(լիգենդ) և «Ճուտիկներ» (մանկ.):

Անդամ է Վր. պրոլիտպրոզների ասոցիացիայի:

քմծի  
Սլո»

Գիճը 15 կույ.

### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- |                 |                    |
|-----------------|--------------------|
| 1. ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳ. | Բանասեղծություններ |
| 2. ՄԱՐՏԻՆ       | Պատվածքներ         |
| 3. ՊԱՅՍԶԱՏ      | «Հողաբեռ»          |
| 4. Վ. ՍԻՄՈՆՅԱՆ  | Վերելիք            |

աան  
կախ  
յաշխ  
մուխ  
չև ի

### ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

- |                  |                    |
|------------------|--------------------|
| 1. ԲԱՆՎՈՐ ԱՄԻՐ   | Պատվածքներ         |
| 2. ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ  | Բանասեղծություններ |
| 3. ՌՌԻԲ. ԱՂԱԲՈՒԲ | «Լիրիկա»           |
| 4. Գ. ԽԱԼՍԹ      | Կողեկսիվր          |



(50x)

ՀՀ Ազգային գրադարան



NL0339410

27436

57